

Primacy of the Armenian Apostolic Orthodox Church of the United Kingdom and Republic of Ireland His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish Uբ Եղիշէ Յայոց Եկեղեցւոյ Ծուխ

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB Registered Charity No 1173403

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԵՐԿԼԵՉՈԻ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BILINGUAL BULLETIN

1: Today's Scripture Reading,

18th February 2024

Bulletin 8/2024

Second Sunday of Great Lent—Expulsion

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ՀՌՈՄԷԱՑԻՆԵՐԻՆ 12:1-13:10 ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ

Ուրեմն կ՚աղաչե՛մ ձեզի, եղբայրնե՛ր, Աստուծոյ կարեկցութեամբ, որ ձեր մարմինները ներկայացնէք որպէս ապրող զոհ մը՝ սուրբ, աստուածահաճոյ. ա՛յդ է ձեր բանական պաշտամունքը։ Եւ մի՛ համակերպիք այս աշխարհին, հապա փոխակերպուեցէ՛ք ձեր միտքին նորոգութեամբ, որպէսզի քննէք թէ ի՛նչ է Աստուծոյ կամքը, որ բարի, հաճելի եւ կատարեալ է։

Քանի որ ինծի տրուած շնորհքով կ՚ըսեմ ձեզմէ ամէն մէկուն, որ իր մասին աւելի բարձր համարում չունենայ՝ քան ինչ որ պէտք է մտածէ, հապա խոհեմութեա՛մբ մտածէ, հաւատքի չափին համեմատ՝ որ Աստուած բաշխած է իւրաքանչիւրին։ Որովհետեւ ինչպէս մէկ մարմինի մէջ ունինք շատ անդամներ, եւ այդ բոլոր անդամները միեւնոյն պաշտօնը չունին, նոյնպէս մենք՝ շատ ըլլալով՝ մէ՛կ մարմին ենք Քրիստոսով, եւ իւրաքանչիւրս՝ իրարու անդամներ։

Ուստի՝ ունենալով շնորհներ, որոնք կը տարբերին այն շնորհքին համեմատ՝ որ մեզի տրուած է, եթէ մարգարէութիւն է՝ մարգարէանա՛նք հաւատքին համեմատութեամբ, եթէ սպասարկութիւն՝ սպասարկե՛նք. ա՛ն որ կը սորվեցնէ՝ թող յարատեւէ սորվեցնելով, ա՛ն որ կը յորդորէ՝ յորդորելով. ա՛ն որ կը բաշխէ՝ թող յարատեւէ պարզամտութեամբ, ա՛ն որ վերակացու է՝ փութաջանութեամբ, ա՛ն որ կ՝ողորմի՝ ուրախութեամբ։

Մէրը թող ըլլայ առանց կեղծիքի. չարէն զզուեցէ՛ք, բարիի՛ն յարեցէք։ Իրարու հանդէպ գորովալի՛ց եղէք՝ եղբայրական սիրով. պատուելու մէջ՝ զիրա՛ր գերադասեցէք։ Փութաջանութեան մէջ ծոյլ մի՛ ըլլաք. եռանդո՛ւն հոգիով Տէրոջ ծառայեցէք։ Յոյսո՛վ ուրախացէք. տառապանքի մէջ համբերեցէ՛ք. աղօթքի մէջ յարատեւեցէ՛ք։ Սուրբերու կարիքներուն հաղորդակի՛ց եղէք. հիւրասիրութեան հետամո՛ւտ եղէք։

Ձեզ հալածողները օրհնեցէ՛ք. օրհնեցէ՛ք եւ մի՛ անիծէք։ Ուրախացողներուն հետ ուրախացէ՛ք, ու լացողներուն հետ լացէ՛ք։ Իրարու հանդէպ միեւնո՛յն մտածումը ունեցէք։ Բարձր բաներու վրայ մի՛ մտածէք, հապա խոնարհեցէ՛ք դէպի նուաստները. դուք ձեզ հմաստուն մի՛ սեպէք։

Չարիքի փոխարէն չարիք մի՛ հատուցանեցէք ոեւէ մէկուն. մտադրեցէ՛ք ընել ինչ որ պարկեշտ է բոլոր մարդոց առջեւ։ Որչափ կարելի է ձեզի` խաղաղութի՛ւն պահեցէք ամէն մարդու հետ։

Միրելինե՛ր, վրէժխնդիր մի՛ ըլլաք դուք ձեզի համար, հապա տե՛ղ տուէք Աստուծոյ բարկութեան. որովհետեւ գրուած է. «Վրէժխնդրութիւնը ի՛մս է, ե՛ս պիտի հատուցանեմ,-կ՚ըսէ Տէրը»։ Ուրեմն «եթէ քու թշնամիդ անօթեցած է՝ սնուցանէ՛ զայն, ու եթէ ծարաւցած է՝ խմցո՛ւր անոր. քանի որ այսպէս ընելով՝ կրակի կայծեր պիտի կուտակես անոր գլուխին վրայ»։

Our Aim:

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

Չարէն մի՛ յաղթուիր, հապա բարիո՛վ յաղթէ չարին։

Ամէն անձ թող հպատակի իր վրայ եղած իշխանութիւններուն. որովհետեւ չկայ իշխանութիւն մը՝ որ Աստուծմէ չըլլայ, եւ անոնք որ կան՝ կարգուած են Աստուծմէ։ Հետեւաբար ո՛վ որ կ՚ընդդիմանայ իշխանութեան, կը դիմադրէ Աստուծոյ կարգադրութեան. եւ անոնք որ կը դիմադրեն՝ իրենք զիրենք կը դատապարտեն՝։ Քանի որ իշխանները՝ բարի գործերու համար վախ չեն ազդեր, հապա՝ չար գործերու։ Ուստի կ՚ուզե՞ս չվախնալ իշխանութենէն. բարի՛ն գործէ, եւ գովեստ պիտի ընդունիս անկէ։ Որովհետեւ ան Աստուծոյ սպասարկուն է քեզի համար՝ որ բարի՛ն գործես. բայց եթէ չա՛րը գործես՝ վախցի՛ր, քանի որ զուր տեղը չէ որ սուր կը կրէ մէջքը. Որովհետեւ Աստուծոյ սպասարկուն է, եւ վրէժխնդիր՝ բարկութիւն հասցնելու անոր վրայ՝ որ չարիք կը գործէ։ Ուստի հա՛րկ է հպատակիլ. ո՛չ միայն բարկութեան համար, այլ նաեւ խղճմտանքի համար։

Այս պատճառով է որ տուրք ալ կը վճարէք. որովհետեւ Աստուծոյ պաշտօնեաներն են՝ բուն այս բանին յատկացուած։ Ուրեմն հատուցանեցէ՛ք բոլորին ինչ որ կը պարտիք. որո՛ւն որ տուրք տրուելու է՝ տուրքը, որո՛ւն որ մաքս՝ մաքսը, որո՛ւն որ վախ՝ վախը, որո՛ւն որ պատիւ՝ պատիւը։ Ո՛չ մէկ պարտք ունեցէք ոեւէ մէկուն, բացի զիրար սիրելէ. որովհետեւ ո՛վ որ կը սիրէ ընկերը՝ գործադրած կ՚ըլլայ Օրէնքը։ Արդարեւ այն ըսուածը. «Շնութիւն մի՛ ըներ, սպանութիւն մի՛ ըներ, գողութիւն մի՛ ըներ, սուտ վկայութիւն մի՛ տար, մի՛ ցանկար», եւ եթէ կայ ուրիշ որեւէ պատուիրան՝ համառօտաբար կը բովանդակուի սա՛ խօսքին մէջ. «Սիրէ՛ ընկերդ քու անձիդ՝՝ պէս»։ Սէրը ո՛չ մէկ չարիք կը գործէ իր ընկերին. ուրեմն սէ՛րն է Օրէնքին գործադրութիւնը։

The Epistle of St Paul to the Romans 12:1-13:10;

A Living Sacrifice to God

And so, dear brothers and sisters, a I plead with you to give your bodies to God because of all he has done for you. Let them be a living and holy sacrifice—the kind he will find acceptable. This is truly the way to worship him. b Don't copy the behavior and customs of this world, but let God transform you into a new person by changing the way you think. Then you will learn to know God's will for you, which is good and pleasing and perfect.

Because of the privilege and authority God has given me, I give each of you this warning: Don't think you are better than you really are. Be honest in your evaluation of yourselves, measuring yourselves by the faith God has given us.d Just as our bodies have many parts and each part has a special function, so it is with Christ's body. We are many parts of one body, and we all belong to each other.

In his grace, God has given us different gifts for doing certain things well. So if God has given you the ability to prophesy, speak out with as much faith as God has given you. If your gift is serving others, serve them well. If you are a teacher, teach well. If your gift is to encourage others, be encouraging. If it is giving, give generously. If God has given you leadership ability, take the responsibility seriously. And if you have a gift for showing kindness to others, do it gladly.

Don't just pretend to love others. Really love them. Hate what is wrong. Hold tightly to what is good. Love each other with genuine affection, e and take delight in honouring each other. Never be lazy, but work hard and serve the Lord enthusiastically. Rejoice in our confident hope. Be patient in trouble, and keep on praying. When God's people are in need, be ready to help them. Always be eager to practice hospitality.

Bless those who persecute you. Don't curse them; pray that God will bless them. Be happy with those who are happy, and weep with those who weep. Live in harmony with each other. Don't be too proud to enjoy the company of ordinary people. And don't think you know it all!

Never pay back evil with more evil. Do things in such a way that everyone can see you are honourable. Do all that you can to live in peace with everyone.

Dear friends, never take revenge. Leave that to the righteous anger of God. For the Scriptures say,

"I will take revenge;
I will pay them back," g
says the LORD.

Instead,

"If your enemies are hungry, feed them.

If they are thirsty, give them something to drink. In doing this, you will heap burning coals of shame on their heads."h

Don't let evil conquer you, but conquer evil by doing good.

Respect for Authority

Everyone must submit to governing authorities. For all authority comes from God, and those in positions of authority have been placed there by God. So anyone who rebels against authority is rebelling against what God has instituted, and they will be punished. For the authorities do not strike fear in people who are doing right, but in those who are doing wrong. Would you like to live without fear of the authorities? Do what is right, and they will honour you. The authorities are God's servants, sent for your good. But if you are doing wrong, of course you should be afraid, for they have the power to punish you. They are God's servants, sent for the very purpose of punishing those who do what is wrong. So you must submit to them, not only to avoid punishment, but also to keep a clear conscience.

Pay your taxes, too, for these same reasons. For government workers need to be paid. They are serving God in what they do. Give to everyone what you owe them: Pay your taxes and government fees to those who collect them, and give respect and honour to those who are in authority.

Love Fulfils God's Requirements

Owe nothing to anyone—except for your obligation to love one another. If you love your neighbour, you will fulfil the requirements of God's law. For the commandments say, "You must not commit adultery. You must not murder. You must not steal. You must not covet."a These and other such commandments—are summed up in this one commandment: "Love your neighbour as yourself."b Love does no wrong to others, so love fulfils the requirements of God's law.

ՅԻՍՈԻՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 5:17-48

«Մի՛ կարծէք թէ եկայ՝ աւրելու Օրէնքը կամ Մարգարէները։ Եկայ ո՛չ թէ աւրելու, հապա՝ գործադրելու։ Որովհետեւ ճշմա՛րտապէս կր լայտարարեմ ձեզի. "Մինչեւ որ երկինքն ու երկիրը անցնին, Օրէնքէն յովտ մր կամ նշանագիր մր պիտի չանցնի՝ մինչեւ որ բոլորն ալ կատարուին"։ Ուրեմն ո՛վ որ այս ամենափոքր պատուիրաններէն մէկը լուծէ եւ մարդոց ա՛յնպէս սորվեցնէ, անիկա ամենափոքր պիտի կոչուի երկինքի թագաւորութեան մէջ. բայց ո՛վ որ գործադրէ ու սորվեցնէ, անիկա մեծ պիտի կոչուի երկինքի թագաւորութեան մէջ։

Որովհետեւ կը լալտարարեմ ձեզի. "Եթէ ձեր արդարութիւնը չգերազանցէ դպիրներու եւ Փարիսեցիներու արդարութիւնը, բնա՛ւ պիտի չմտնէք երկինքի թագաւորութիւնը՝»։

«Լսեր էք թէ ըսուեզաւ նախնիքներուն. "**Մի' սպաններ**"։ Ո՛վ որ սպաննէ, արժանի պիտի րլլալ դատաստանի։ Բայց ես կր լայտարարեմ ձեզի. "Ո՛վ որ զուր տեղը բարկանալ իր եղբօր դէմ՝ արժանի պիտի րլլայ դատաստանի։ Ո՛վ որ "ապուշ" ըսէ իր եղբօր՝ արժանի պիտի ըլլայ ատեանի դատապարտութեան։ Ո՛վ որ "յիմար" ըսէ իր եղբօր՝ արժանի պիտի ըլլայ գեհենի կրակին"։ Ուրեմն եթէ քու ընծադ զոհասեղանին վրայ բերես, ու հոն լիշես թէ եղբայրդ բա՛ն մր ունի քեզի դէմ, հո՛ն ձգէ ընծադ՝ զոհասեղանին առջեւ. նա՛խ գնա՝ հաշտուէ՛ եղբօրդ հետ, եւ ա՛յն ատեն եկուր՝ որ մատուցանես ընծաղ։ Շուտո՛վ համաձայնէ քու ոսոխիդ հետ, մինչ ճամբան ես անոր հետ, որպէսցի հակառակորդը չյանձնէ քեց դատաւորին, ու դատաւորը՝ ոստիկանին, եւ բանտը չնետուիս։ Ճշմա՛րտապէս կը լայտարարեմ քեզի. "Բնա՛ւ դուրս պիտի չելլես անկէ, մինչեւ որ վճարես վերջին նաքարակիտը"»։

«Լսեր էք թէ րսուեցաւ. "**Շնութիւն մի' ըներ**"։ Բայց ես կր յայտարարեմ ձեզի. "Ո՛վ որ կը նայի կնոջ մը՝ անոր զանկալու համար, արդէն անիկա իր սիրտին մէջ շնութիւն ըրած է անոր հետ"։ Ուստի եթէ աջ աչքդ կր գայթակղեցնէ քեզ, հանէ՛ զայն ու նետէ՛ քեզմէ. որովհետեւ աւելի օգտակար է քեզի՝ որ անդամներէդ մէկը կորսուի, բայց ամբողջ մարմինդ չնետուի գեհենը։ Եթէ աջ ձեռքը կը գալթակրեցնէ քեց, կտրէ՛ գայն ու նետէ՛ քեցմէ. որովհետեւ աւելի օգտակար է քեզի՝ որ անդամներէդ մէկը կորսուի, ու ամբողջ մարմինդ չնետուի գեհենը»։

«Նաեւ րսուեցաւ. "**Ո՛վ որ արձակէ իր կինը, թող տայ անոր ամուսնալուծումի վկալագիր մը**"։ Քայց ես կր լայտարարեմ ձեզի. "Ո՛վ որ կ'արձակէ իր կինը՝ առանց

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

պոռնկութեան պատճառի, ի՜նք շնութիւն ընել կու տայ անոր, եւ ո՛վ որ կ՚ամուսնանայ արձակուածին հետ՝ շնութիւն կ՚րնէ՚՚»։

«Լսեր էք դարձեալ թէ ըսուեցաւ նախնիքներուն. "**Սուտ երդում մի՛ ըներ, հապա հատուցանէ՛ Տէրոջ ըրած երդումներդ**"։ Բայց ես կը յայտարարեմ ձեզի. "Երբե՛ք երդում մի՛ ընէք, ո՛չ երկինքի վրայ՝ որ Աստուծոյ գահն է, ո՛չ երկրի վրայ՝ որ անոր ոտքերուն պատուանդանն է, ո՛չ Երուսաղէմի վրայ՝ որ **Մեծ Թագաւորին քաղաքն է**, ո՛չ ալ գլուխիդ վրայ երդում ըրէ, որովհետեւ չես կրնար մէ՛կ մազ ձերմկցնել կամ սեւցնել։ Հապա ձեր խօսքը րլլայ՝ այո՛ն՝ այո՛, եւ ո՛չը՝ ո՛չ. ասկէ աւելին յառաջ կու գայ Չարէն՝»։

«Լսեր էք թէ ըսուեցաւ. "**Աչքի տեղ՝ աչք, եւ ակռայի տեղ՝ ակռայ**"։ Բայց ես կը յայտարարեմ ձեզի. "Չարին մի՛ դիմադրեր. հապա ո՛վ որ ապտակէ աջ այտիդ, դարձո՛ւր անոր միւսն ալ։ Եթէ մէկը ուզէ դատ վարել քեզի հետ ու բանկոնդ առնել, թո՛ղ տուր անոր հանդերձդ ալ։ Եւ ո՛վ որ ստիպէ քեզ մղոն մը երթալ, գնա՛ անոր հետ երկու մղոն։ Տո՛ւր քեզմէ ուզողին, ու երես մի՛ դարձներ անկէ՝ որ կ՚ուզէ փոխ առնել քեզմէ"»։

"Սիրէ՛ թէ րսուեցաւ. րնկերդ **թշնամիդ**՝: Քայց ես կր յայտարարեմ ձեզի. "Սիրեցէ՛ք թշնամիները, օրինեցէ՛ք ձեզ անիծողները, բարի՛ք ըրէք անոնց՝ որ կ՝ատեն ձեզ, եւ աղօթեցէ՛ք անոնց համար՝ որ կր պախարակեն ու կը հայածեն ձեզ, որպէսգի ըլյաք ձեր երկնաւոր Հօր որդիները. որովհետեւ իր արեւր կր ծագեցնէ թէ՛ չարերուն եւ թէ բարիներուն վրալ, եւ անձրեւ կր որկէ թէ՛ արդարներուն եւ թէ անարդարներուն վրալ։ Որովհետեւ եթէ դուք սիրէք ձեզ սիրողները, վարձատրութիւն կ'ունենաթ. մաքսաւորնե՛րն այ նոյնը չե՞ն ոներ։ Ու եթէ բարեւէք միայն ձեր եղբայրները, ի՞նչ աւելի կ՚ընէք ուրիշներէն. մաքսաւորնե՛րն ալ նոյնը չե՞ն ըներ։ Ուրեմն դուք կատարեա՛լ եղէք, ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է"»։



Jesus Teaching

The Holy Gospel of Jesus Christ according to Matthew 5:17-48

"Do not think that I came to abolish the Law or the Prophets; I did not come to abolish but to fulfill. "For truly I say to you, until heaven and earth pass away, not the smallest letter or stroke shall pass from the Law until all is accomplished. "Whoever then annuls one of the least of these commandments, and teaches others to do the same, shall be called least in the kingdom of heaven; but whoever keeps and teaches them, he shall be called great in the kingdom of heaven.

"For I say to you that unless your righteousness surpasses *that* of the scribes and Pharisees, you will not enter the kingdom of heaven.

Personal Relationships

"You have heard that the ancients were told, 'YOU SHALL NOT COMMIT MURDER' and 'Whoever commits murder shall be liable to the court.' "But I say to you that everyone who is angry with his brother shall be guilty before the court; and whoever says to his brother, 'You goodfor-nothing,' shall be guilty before the supreme court; and whoever says, 'You fool,' shall be guilty enough to go into the fiery hell. "Therefore if you are presenting your offering at the altar, and there remember that your brother has something against you, leave your offering there before the altar and go; first be reconciled to your brother, and then come and present your offering. "Make friends quickly with your opponent at law while you are with him on the way, so that your opponent may not hand you over to the judge, and the judge to the officer, and you be thrown into prison. "Truly I say to you, you will not come out of there until you have paid up the last cent.

"You have heard that it was said, 'YOU SHALL NOT COMMIT ADULTERY'; but I say to you that everyone who looks at a woman with lust for her has already committed adultery with her in his heart. "If your right eye makes you stumble, tear it out and throw it from you; for it is better for you to lose one of the parts of your body, than for your whole body to be thrown into hell. "If your right hand makes you stumble, cut it off and throw it from you; for it is better for you to lose one of the parts of your body, than for your whole body to go into hell.

"It was said, 'WHOEVER SENDS HIS WIFE AWAY, LET HIM GIVE HER A CERTIFI-CATE OF DIVORCE'; but I say to you that everyone who divorces his wife, except for *the* reason of unchastity, makes her commit adultery; and whoever marries a divorced woman commits adultery.

"Again, you have heard that the ancients were told, 'YOU SHALL NOT MAKE FALSE VOWS, BUT SHALL FULFILL YOUR VOWS TO THE LORD.'

"But I say to you, make no oath at all, either by heaven, for it is the throne of God, or by the earth, for it is the footstool of His feet, or by Jerusalem, for it is THE CITY OF THE GREAT KING. "Nor shall you make an oath by your head, for you cannot make one hair white or black. "But let your statement be, 'Yes, yes' or 'No, no'; anything beyond these is of evil.

"You have heard that it was said, 'AN EYE FOR AN EYE, AND A TOOTH FOR A TOOTH.' "But I say to you, do not resist an evil person; but whoever slaps you on your right cheek, turn the other to him also. "If anyone wants to sue you and take your shirt, let him have your coat also. "Whoever forces you to go one mile, go with him two. "Give to him who asks of you, and do not turn away from him who wants to borrow from you.

"You have heard that it was said, 'YOU SHALL LOVE YOUR NEIGHBOR and hate your enemy.' "But I say to you, love your enemies and pray for those who persecute you, so that you may be sons of your Father who is in heaven; for He causes His sun to rise on *the* evil and *the* good, and sends rain on *the* righteous and *the* unrighteous. "For if you love those who love you, what reward do you have? Do not even the tax collectors do the same? "If you greet only your brothers, what more are you doing *than others?* Do not even the Gentiles do the same? "Therefore you are to be perfect, as your heavenly Father is perfect.

Սուրբ Թեոդորոս զորավարի հիշատակության օր

Մբ. Թեոդորոս զորավարը համաքրիստոնեական սուրբ է, որի հիշատակությունը Հայ Առաքելական եկեղեցին տոնում է Մեծ Պահքի առաջին շաբաթ օրը։ Ըստ վարքագիրների՝ նա ծնվել էր Ամասիա քաղաքի Սարու գյուղում և ունեցել քրիստոնյա բարեպաշտ ծնողներ։ 4-րդ դարի սկզբին, Դիոկղետիանոսի հալածանքների ժամանակ, ապացուցելու համար կուռքերի հնարովի եւ կեղծ լինելը, գիշերով հրի է մատնել հեթանոսական Ռէա չաստվածուհու մեհյանը։ Այս արարքի համար բանտ է նետվել և մեծագույն չարչարանքներից հետո 306 թվականին նահատակվել՝ այրվելով կրակի վրա։ Մբ. Թեոդորոս զորավարը հայտնի է նաև, որպես վիշապասպան, որ քաջությամբ ու հավատով հաղթել է հսկա վիշապի։ Օտար եկեղեցիներում հայտնի է նաև «Դիռոն» անվամբ, որ հունարեն նշանակում է «նորեկ» զինվոր։

<u>Արտաքսման կիրակի</u>

Մեծ Պահքի երկրող կիրակին կոչվում է նաև Արտաքսման։ Օրվա խորհրդի և անվան մասին Աստվածաշունչ մատյանի Ծննդոց Գրքում գրված է. «...Եվ արտաքսեց նրան Աստված Եդեմի պարտեզից, որպեսզի մշակի հողը, որից և ստեղծվել էր»։ (Ծննդ. 3:23)։ Նախապատմությունը հետևյալն է. մարդն ունկնդիր լինելով Սատանայի խաբեբայական խոսքերին, պատվիրանազանց գտնվելով՝ համտեսեց արգելված պտղից։ Որպես պատիժ, մարդն իհարկե, անմիջապես չմահացավ, սակայն զրկվեց Աստծո կողմից շնորհված անմահությունից և անիծվեց։ Այսուհետ, մարդն իր քրտինքով պետք է վաստակի օրվա հացը և կինը պետք է ցավով ու տատապանքով զավակ ունենա և վերջում էլ ասվեց նրան. «...հող էիր և հող կդառնաս» (Ծննդ.3.19)։

Եկեղեցական հայրերն իմաստուն կերպով Քառասնորդաց Պահքի շրջանի կիրակիներն այնպես են դասավորել և այնպիսի անվանումներ ու խորհուրդներ տվել, որոնցով ի հայտ է գալիս մարդկության կյանքի ուղին՝ ծնունդ, մեղսագործություն, զղջում, ապաշխարանք։ Սա ինքնին մարդուն խորհելու ևս մեկ առիթ է սեփական անձին անդրադառնալու, պահոց շրջանն արդյունավետ անցկացնելու համար։

Commemoration of St. Theodoros the Captain

St. Theodoros the Captain is a Saint recognized by all traditional churches of Christendom. The Armenian Church commemorates this Saint on the first Saturday during the period of Great Lent. According to hagiographers, St. Theodoros was born to God-fearing and pious parents in the village of Saroo, near the town of Amasia. He was a soldier in the Roman Army, and rose through the ranks, eventually becoming a Captain.

In the beginning of the fourth century, Rome was under the rule of the Emperor Diocletian. Instead of worshipping at the temple of the pagan goddess Rea, as he had been instructed to, St. Theodoros burns the temple to the ground, thus demonstrating that pagan idols were false. For this act, Diocletian imprisons St. Theodoros, and he suffers severe tortures. In the year 306 A.D., he is martyred by being set on fire. St. Theodoros is also known as the "Slayer of the Dragon", as he was said to have defeated a great and mighty dragon due to his courage and faith.

<u>Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.</u>

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Մրբոյ. ամէն։

«Տէրն է մեր դատաւորը, Տէրն է մեր իշխանը, Տէրն է մեր թագաւորը, Տէրն է մեր փրկիչը, Նա է փրկելու մեզ» (Ես. 22-33)։

Աստծուն զաւակացած եղբայրներ եւ քոյրեր,

Մեծ Պահքի ապաշխարութեան շրջանի մէջ ենք, ընդհանրական հոգեւոր խոկումի եւ միաժամանակ առանձնական, անհատական ինքնաքննութեան մէջ։ Նախորդ կիրակիի դրախտի ուրախութեան յիշեցումից յետոյ այս կիրակին մեզ ակնարկն է տալիս մարդու անկումի, Աստծոյ դէմ ելնելու եւ դրախտից դուրս դրուելու։ Այս պատճառով խորհրդանշական ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻ անունն է կրում։

Կեանքում շատ են այնպիսի միջադէպերը, երբ կորցնելուց յետոյ է գնահատւում, ամբողջապես արժեւորւում այն, ինչ մեր ձեռքում ունէինք։ "Դրախտ կորուսեալ"-ը մեզ համար այդքան զգալի ու ցաւալի չէ, որքան դա իրէնց աչքերով տեսած առաջին մարդկանց համար։ Ադամի եւ Եւայի մէջ խտանում է ամբողջ մարդութիւնը։ Մենք եւս մեր դրախտներն ենք կորցնում՝ ակամայ մեր հարազատութիւնը ցոյց տալով նախածնողներին։ Ուրեմն, միայն իրէնք չեն արտաքսուած, այլ մենք եւս։ Շատերն են մեղադրում Եւային կամ Ադամին, թէ ինչու հնազանդ չեղան Աստծուն եւ կորցրին դրախտը, բայց մենք եւս ամէն օր մեր փոքր կամ մեծ անհնազանդութեամբ կորցնում ենք մեր փոքր կամ մեծ, ներքին ու արտաքին "դրախտները"։

Յետեւաբար, Արտաքսման կիրակիից եկեղ պատգամը մեր անցեալի վերաքննումն է՝ առանց մեղադրելու այլոց. ո՛չ Աստծուն, որ մեր մտածելով ինչ-որ բան կարծես սխալ է արել եւ ո՛չ էլ մեր աչքին օձի դերում մեղադրուող այլ մարդկանց։ Անցեալի վերաքննումն է՝ ըստ մե՛ր ապրածի, ըստ մե՛ր իսկ ազատ կամքով գիտակցաբար արուած ընտրութիւնների։ Ինքնաքննութեամբ է նուաճւում ինքնաճանաչման ներքին ամրոցը։ Ինքն իրեն չը կեղծող, ազնիւ կերպով քննող մարդը խոստովանում է, որ սխալներ ու մեղքեր ունի, որ յաճախ իրէն ոչ թէ արտաքսել են, այլ ինքն է կամաւորաբար հեռացել։ Իսկ այս մտածումը ծնում է ափսոսանք, գրջում եւ վերադարձի զանկութիւն։

մեզ անկեղծօրէն Ինքերս խոստովանենը, nn մենք աւելի որախտաբնակները, որ մենք էլ ենք այս պահին տառապում մեր իսկ գործած սխայների եւ մեղբերի արդիւնքում։ Մենք պէտք է խոստովանենք, որ հոգով հիւանդ ենք եւ ապրում ենք մեզպէսներից կազմուած հասարակութեան մէջ, որ հոգեւորապէս նոյնպէս խոցուած, խեղուած ու հիւանդ է։ Վկան՝ սպանութիւնների եւ ինքնասպանութիւնների ահագնացող թիւր, նաւթի ու դրամի համար պատերացմներում գնդակներից, թունաւոր նիւթերից ու սովից մահացած մանուկները, մահից մազապուրծ փախստականները։ Ամէն հասարակութիւն հիւանդ է իւրովի, ամէն մէկն իր ականջներին շշնջացող ի՛ր օձն ունի։ Իսկ օձր խօսում է իւրաքանչիւրի թաքուն ցանկութիւնների, ծուռ ու մոլար կրքերի մասին։ Նայենք իրէնց առաջադէմ կոչող այսօրուայ հասարակութիւններին. կերուած են բոլոր "արգելուած պտուրները", չր կայ այլեւս մի անկիւն, որ անձեռնմխելի է, սրբազան, երկիւդայի, վեհ, ոտնամաններն առջեւր հանելու չափ սուրբ....

Մենք Աստծուն Տէր եւ Հայր ենք կոչում, բայց հարցը դրանով չի փակւում. «Որդին փառաւորում է Հօրը, եւ ծառան երկնչում է իր Տիրոջից։ Իսկ արդ, եթէ ես Հայր եմ, ո՞ւր է իմ փառքը, իսկ եթէ Տէր եմ, ո՞ւր է իմ պատիւր, - ասում է Ամենակալ Տէրը» (Մաղաք.1.6)։

Արտաքսման կիրակիի մտածումով՝ մեր հոգին հարսանիքը կիսատ թողած հարսի նման է։ Եւ կրկնակի կարեւոր է դառնում այն խոկումը, որ այն, ինչի համար թողեցինք մեր դրախտները, ժամանակաւոր հաճոյքների պէս են։ Ըստ այդմ՝ նոր հրապուրիչ օձային առաջարկներից հրաժարուելու եւ վերադարձի կամք պէտք է ունենանք. «աշխարհն անցնում է, իսկ ով կատարում է Աստծոյ կամքը, մնում է հաւիտեան» (Ա.Յովհ. 2.17)։

Իսկ ո՞րն է Աստծոյ կամքը. «Այս է իմ Հօր կամքը. ամէն ոք, ով տեսնի Որդուն եւ հաւատայ նրան, ունենայ յաւիտենական կեանք. եւ ես նրան վերջին օրը յարութիւն առնել տամ» (Յովհ. 6.40)։ Աստծոյ կամքը մեր որդիութիւնն է Իրէն, Իր Որդուն նմանութիւնն ունենալն ու Փրկչի ետեւից քայլելն է, ինչպէս Քրիստոս իսկ ասում է. «Լսել էք արդարեւ, թէ ինչ ասուեց. "Պիտի սիրես ընկերոջդ եւ պիտի ատես քո թշնամուն"։ Իսկ ես ձեզ ասում եմ. սիրեցէ՛ք ձեր թշնամիներին, օրհնեցէ՛ք ձեզ անիծողներին, բարութի՛ւն արէք ձեզ ատողներին եւ աղօթեցէ՛ք նրանց համար, որ չարչարում են ձեզ եւ հալածում, որպէսզի որդիները լինէք ձեր Հօր, որ երկնքում է.» (Մատթ. 6.43-45)։

Այօրուայ շարականը գեղեցիկ կերպով ամփոփում է այս կիրակիի խոկումը՝ մեզ կոչ անելով. "Կեանքի դրախտից ելնելու համար Ադամի տրտմութեան հետ մենք էլ ընդունենք ապաշխարութեան տրտմութիւնը, որպէսզի Քրիստոսի յարութեամբ արժանանանք մտնել Եկեղեցու դրախտր»։

Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սէրը եւ Սուրբ Հոգու հաղորդութիւնը ձեզ հետ լինեն։ Ամէն։ **Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան**

Sunday of Expulsion

The second Sunday of the period of Great lent is called the Sunday of Expulsion. The basis of the mystery of and the name of the day can be found in the Holy Bible, the Book of Genesis: "So the Lord God sent him out of the Garden of Eden and made him cultivate the soil from which he had been formed" (Genesis 3:23). Prehistory is the following. The human being, listening to the deceitful words of Satan, disobeyed the divine commandments and ate the forbidden fruit, As punishment the human being, the human being, of course, didn't die at once, but was deprived of the eternity granted by God and was cursed Since then man must work hard and sweat to make the soil produce enough food, and woman will have pain in giving birth to her offspring. And in end God said to the human being: "You were made from soil and you will become soil again" (Genesis 3:19).

DAILY BIBLE READINGS FOR 2024 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

19 February 1 Samuel 1:1-23; Proverbs 1:1-33; Jeremiah 1:1-10

20 February 1 Samuel 1:23-2:26; Proverbs 2:1-3:10; Jeremiah 1:11-2:3

21 February Exodus 2:11-22; Joel 2:1-11; Micah 4:1-7

22 February 1 Samuel 3:21-4:18; Proverbs 3:11-4:14; Jeremiah 2:31-3:16

23 February Deuteronomy 7:11-8:1; Job 9:1-10:2; Isaiah 40:9-17

24 February St. Cyril of Jerusalem

Proverbs 11:2-11; Isaiah 61:3-7; 2 Timothy 4:1-8; John 10:11-16

Announcement

Dear St Yeghiche Parish Registered Members,

We are pleased to inform you that our Annual Parish General Assembly meeting will take place on 25th February 2024 at St Yeghiche Armenian Church at 1:00pm.

As stated in our constitution all registered members are encouraged and should participate at this Annual Parish Assembly meeting provided they have paid their Parish Contribution for the year and up to 2023.

Your attendance is extremely important to evaluate and support your Parish and its council who have collectively volunteered to run the activities at the church and within your Parish.

We look forward seeing you

St Yeghiche Armenian Church Parish Council

PRAYER SERVICES DURING THE GREAT LENT

Monday, 12th February, is the beginning of Great Lent, a period which lasts 40 days. The Armenian Church defines the period of Great Lent as a time of abstinence and repentance for the faithful. It is a profound and unique period of spiritual experience.

Liturgical celebrations on Sundays: There are services every Sunday starting at 11:00 am at St Yeghiche Armenian Church. The faithful are welcome.

Vigils on Friday evenings: There are vigils every Friday evening at Sarkis Church (on 16th 23rd February and 1st March) and at St. Yeghiche Armenian Church (on 8th, 16th and 22nd March) starting at 6:30 pm. We look forward seeing our faithful and raise our prayers for our salvation.

4: Znqthwuqhuun - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

There are no memorial Service request for this week

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Մորհրդակատարութիւններուն՝ Տնօրհնէքի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Մբ Երիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Քահանայ Ալավերդեանի** 07548 777 147։

Hokehankist and in Liu of Flowers: Friends and family of the deceased can make donations, in memory of their loved one, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund for prayers or in lieu of sending flowers.

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: 07970 146 280 or by emailing info@styeghiche.org.uk

Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the administration number at 07970 146280, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. Please remember our Church in your prayers.

Your kind donations are gratefully accepted:

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

We welcomes your donations for prayers and support towards church annual expenses. May the Lord bless you and your family, keep you away from all harm and fulfil all you prayers and dreams.

-You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, 13b Cranlev Gardens, Kensington, London, SW7 3BB. Please make your cheques payable to: "St Yeghiche Armenian Church".

-You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Ac-HSBC, Sort code: 40-02-26, Acc.no: 42674432, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

-Alternatively you may use our QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic week-

ly, monthly or periodical contributions. Thank you. St Yeghiche Armenian Church Parish Council

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403.

Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.